№ 93 ՀԻՆԳՇԱԲԹԻ 2 ՄԱՑԻՍԻ

1913

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 2 ՄԱՑԻՍԻ № 93

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԴՐԻԴԱՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կօպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

Բայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կօպ.։

Նովոսիյ գոլոս գոնվող անձնի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Ռոստովում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 րուբլին, ձրիարար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» և նայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ի գիտութիւն բազում յաճախորդների եւ „Մշակի" ընթերցողների յայտնվում է, որ „Մշակի" հատուկ վաճառը ԲԱԳԻՈՒՄ մայիսի 1-ից սկսած կեանքը փոխադրված է „ՆՈՐ ԼՈՒՅՍ" տպագրական Բիւրօյի ձեռքում: Բիւրօյի հասցէն է. Малая-Морская № 2.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԿԱՋՄԱԿԵՐՊԻՉ ԿՕՄԻՏԷՏԸ

յայտնում է իւ գիտութիւն պ. պ. ակցիօներների, որ կիրակի, ներկայ մայիս 10-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի Վաճառականական Ընկերութեան շինութեան մէջ (Բէբուտովսկայա փող. № 50) նշանակված է ակցիօներների

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հետևեալ.

1) *Խորհրդի անդամների պակաս թիւը,*
2) *Վարչութեան երեք անդամ, եւ*
3) *Վերատեսուչ Յանձնաժողովի 5 անդամ:*

Ձայնաւորութեան համար որված հատատարմագրերը, նոյնպէս և ժամանակաւոր վկայագրերը ուրիշին յանձնելու մասին ներկայացնել կազմակերպիչ կոմիտեին Դիւանատունը՝ ժամանակին գրի առնելու համար:

Միևնոյն շաբաթ, մայիսի 11-ը, հաշված և այդ օրը:

345. 1—1

ԿՆԱՔԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ նիւրիճ, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն ստացիոնարն հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), ցաւօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն կանացի, նիւրիճ և մանկական հիւանդութիւն ունեցող երեւելի հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:

Ընդունելութիւն պրօֆ. Մ. Ս. Սուբբօտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, ցաւօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը:

Հիւանդասենեակի բժիշկները

Ա. Ա. Բարսեղիանեան, Ն. Ե. Վասիլովսկի, Վ. Ա. Զակրժեվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նօսիցկիյ, Գ. Ե. Տէր-Ներսէսեան, Ե. Զ. Ամիկեան, Ա. Ր. Փիլէր, Մ. Պ. Շահպարոնեանց, գնահատական՝ պրօֆեսօր Մ. Ս. Սուբբօտին:

(հ.կ.) առ. 779. 160—50

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԻՄԱԼՄԱՐԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս թոքերի, ԹՈՔԱՒՏԻ և որոնց ռէնտգենեան նկարի և ՏՈՒՐԲՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ԲԱԺԻՆ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕՏՕՐԱՔՈՒՄՊ:

Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9 1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:

Շաբաթներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:

Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դանօվսկայա): Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 92. 100—62

ԲԺԻՇԿ

Յ. Մելիք-Նուբարեան

ներքին և երեխաների հիւանդութիւններին, առանձնապէս թոքերի

Թորախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատորակսով:

Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ (առաւօտեան 12—1 ժ.

Ամեն օր (երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Բահչեվսկայա 10 (Լերմօնտովսկ. դեղատան դիմացը):

(հ. հ. կ.) առ. 746. 100—86

ԱՏԱՄՆԱԲՈՅԾ

Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ

(Նախկին օգնական Կամայովի).

Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը

Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—11½-ը և երեկ. ժ. 4—7-ը Վելեամինովսկայա փողոց № 4, բն. 3.

առ. (օ.մ.) 129. 50—28

ԲԺԻՇԿ

ԹՈՒՔԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանոնց և ամեն աբտնի վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:

Հասցէն՝ Բահչեվսկայա № 1.

առ. (հ. հ. հ.) 4. 100—47

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

IV

— Արդեօք ներկայումս ապահո՞վ է Թիւրքահայաստանում թէ ոչ,—ահա մի հարց, որը լսում է թէ մեզանում և թէ ամեն տեղ:

— Ո՛չ,—պատասխանում են տեղացիները մարդիկ,—ապահով չէ:

— Իսկ կոտրածներ և ջարդեր չա՞ տեղերում գոյութիւն ունե՞ն,—հարցնում են ամեն ընկնումից:

— Ո՛չ,—պատասխանում են թիւրքահայերը,—կոտրածներ և ջարդեր չը կան ընդարձակ ծաւալով, բայց սարսափների և արհաւիրքների սպառնալիքը կախված է օդի մէջ և թունաւորում է բոլորի կեանքը:

Արդարև՝ հայերին լրտեսում են, խուզարկում են, ղինաթափ են անում, բռնաբարում են, ծեծում են, բանտարկում են և մշտական սպասելիքներով երկիւղի մէջ են պահում բոլորին:

Հայերի վրա է թափվում բոլոր նեան անալոյ պատերազմի վրէժը: Մահմեդականը ուզում է իր սիրտը հովացնել մի ուրիշ քրիստոնեայի վրա յաղթութիւն կատարելով:

Եւ մոռացված է հայի զինուորական աշակերտիլիը և օգնութիւնը, որը նա ցոյց տուեց վերջին պատերազմում: Իրանք թիւրք զօրավարները մի քանի անգամ վկայել են, որ հայ զինուորը կռւել է անձնուէր, իբրև պարտաճանաչ ռազմիկ: Թիւրք մամուլը արձանագրեց ժամանակին այդ հանդգնամանքը և դրատաեց հայ զինուորին: Բայց այսօր մոռացված է այդ բոլորը և ֆանատիկոս մասսայի առաջնորդները այլ ևս չեն յիշում թիւրքահայի ծառայութիւնները, որովհետև այդ թիւրքահայը մխենդի ժամանակ խնդրում է ամենասարսափելի բարիշէն կուլտուրական կեանքի երաշխաւորութիւն լքված ու կազմալուծված պետութեան մէջ:

Եթէ մահմեդական մասսան փոքր ինչ աւելի կուլտուրական լիներ, նա ինքը պէտք է ինքնուրոյն կերպով պահանջէր, որ իրագործվեն այն բարեկարգութիւնները, որոնց մասին խըմբրում են հայերը:

Այդ բարեկարգութիւնները կազդուրիչ և շինարար են ամբողջ պետութեան համար: Եւ հայկական պահանջները միայն հանրային բարեկեցութեան և պետական բարգաւաճման պահանջներ են:

Այսպէս թէ այնպէս՝ հայկական բռնութիւնների տարբը դրված է դիւանագէտների սեղանի վրա և նրա ընդարձակ թէ սահմանափակ ծաւալով ընդարձակ մեզ սահմանափակ ծաւալով քննութիւնը մերձաւոր ժամանակի հոգսերից մերը է:

Պետութիւնները զգացնել են տալիս թիւրք կառավարութեանը, որ հայկական հարցը մերժվել չէ կարող, ինչպէս այդ եղել է երկար տարիներ, և որ այսօր նա պէտք է այնպիսի մի լուծում տանայ, որ գոհացնի եւրոպական հասարակական կարծիքը:

Իսկ ինչ է մտածում թիւրք կառավարութիւնը: Արդեօք ընդ առաջ գնա՞լ և նախօրօք բարեկարգութիւնները մտցնել սեփական նախաձեռնութեամբ:

Ո՛չ:

Նա որոշել է սակարկել, սակարկել և սակարկել:

Բայց կա՞յ արդեօք սակարկութեան տեղ այն սահմանափակ բարենորոգչական ծրագրում, որ մշակել են թիւրքահայերը: Անկասկած՝ ոչ: Եւ սակայն օսմանեան պառլամենտ՝ ժանդրատած քաղաքագիտութիւնը ընդունակ չէ առնելու թարմ և փրկարար գործելակերպի համար:

Ա. Գալանթար

«Մուշում կատաղութիւն է դաշնակցական Աւետիք Սիմոնեանը կասկածելով դէնք փոխադրելում»:

Սահմանեան

ԱՆԱՏՕԼՈՒԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ ԽՆԴԻՐԸ

— «Իրազմ» կը հրատարակէ Լօնդօնէն նամակ մը, որ արտատպում մը կընէ անգլ. «Քռօնիքըլի Րիվիու» հանդէսէն՝ Մօտաւոր Արևելքի մէջ անգլ. քաղաքականութեան մասին յօդուածէ մը: Ի մէջ այլոց հայոց վրայ խօսելով կըսէ. «Ռուսիա՝ իր երկրին մէջ հաղարաւոր հայեր գանուելովը անկրելի է որ կողմակից ըլլայ Հայաստանի մը կազմութեանը: Հայերն ալ այդ կլիմայէն ատկ ընտ իրեն ազատ ապրիլ կարելի է, թէ այդպէս օսմ. կայսրութենէն անջատուելով, ուր իրաւունքի հաւասարութիւն կը վայելեն, աւելի բանակ պետական զօրութեան մը ապրեցութեան գերին ըլլալով այդ վիճակին մէջ մնան»:

◆ Անատոլուի արևելեան նահանգաց մէջ ոստիկան-վիճուրներու կազմակերպութեան հիմերը պատրաստելու համար Բօման փաշայի նախագահութեամբ կազմուած յանձնաշարի նախագահութիւնը կազմուած ժողովը վերջերս չորս մասի բաժնուեր է, որոնց իւրաքանչիւրը նոյն նահանգաց զանազան մասերը երթալով կազմակերպութեան պիտի ձեռնարկին: Կառավարութիւնը նաև մտադիր է Անգլիայէն բարձրատիճան երկու օֆիցեր բերել և Անգլիայէն, Ֆրանսայէն ու Շուէդէն հարիւրապետի, տեղապետի ու յիւսնապետի աստիճանով պէտք եղածին չափ մարդիկներ: Ըստալի է, որ այս մտադրութիւնը շուտով իրականանայ:

◆ «Թանին» կըսէ, թէ բարենորոգմանց կիրառման հակիլու համար կեդրոնի քննիչ մարմնոյն իրաւասութիւնները և գործառնութիւնները աւելի պիտի ընդարձակուին. նաև իւրաքանչիւր նահանգի կեդրոնին մէջ միայնոյն քննիչ մը պիտի գտնուի, որ կոստակահներու տրուած իրաւասութեանց ընդարձակման կիրառմանը վրայ պիտի հսկէ և պաշտօնեաներու պատասխանատուութիւնները պիտի սահմանէ: Կեդրոնի քննիչ մարմնոյն մէջ պիտի գտնուի Անգլիայէն բերուելիք քննիչ մը, որ ընդհ. բարենորոգմանց կիրառմանը վրայ պիտի հսկէ: Ընդհ. քննիչը տարին մէկ անգամ պիտի այցելէ բոլոր շրջանները:

(«Բիւզանդիոն»)

ԱՅԲՈՒԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՑԳԻՑ

— Բէակցիօներական բրօշիւրներ.—Վովօրական դէպքեր.—Հայերը կասկածելի.—Շինօմնիկական նոր վոհմակների արօտավայրը հայկական նահանգներն են. և այլն և այլն:

Կարին, 25 ապրիլի

Լոյս է տեսել թիւրքերէն լեզուով մի բրօշիւր Էդիբ Էյմիի հեղինակութեամբ: Ցանասիկ-հայրենասիրական «բանասեղծութիւնների» մի ամբողջ շարան: Ահա նրա բովանդակութեան ոգին մօտաւորապէս.

«Հազար ափսոս քեզ, ով Էդիրնէ, որ ընկար պիղծ խաչապաշտների գերշպարին տակ. այժմ փառապանծ մզկիթներդ եկեղեցու փոխել են մտածում քրիստոնեայ ճարտարապետները: Վայ մեզ, կորաւ Մահմէդի ս. կրօնը և պիղծ խաչը յաղթանակից իր բիբա այժմ, ու սիրտդ մահ ու աւեր խոլամական խաղաղ (?!) և շէն (?!) երկիրներում: Ոտի կանգնեցէք, ով միւսիւլմաններ, և Ալլահի այժմեան ապաւինած՝ վտանգէք խաչը աշխարհի երեսից...» և այլն:

Մի այլայլ տպարանում լոյս է տեսել «Այլընար» (դաւանաններ) վերնագրով թիւրքերէն մի ուրիշ բրօշիւր, որի հեղինակն է Աբէչ-բէյ:

Այս գրքոյկը, վերլուծելով օսմ. կայսրութեան անկումը, կնշանրօնանում է մեկ պատճառի վրա. դա քրիստոնեաների դաւաճանութիւն է: Այս բրօշիւրը այն միտքն է արծարծում, թէ հայերը դաւաճաններ են օսմ. պետութեան դէմ, թէ պէտք է նրանց զինուոր չառնել, պետական գործերից հեռացնել, վերջապէս զսպել ու սանձահարել քրիստոնեաներին, որ մասնակցին բռնի մելիական երկրաբաժը թշնամու ձեռքը և այլն և այլն:

Այս բրօշիւրը մինչև որ մարդիկ թիւրք ժողովրդի մէջ գաղտնի տարածել են հազարաւոր օրինակներով, նոյն իսկ ուղարկել են զինւորում բժժանելու: Կառավարութիւնը դեռ չէ կարողացել այս գրառոր պրօպագանդի աղբիւրը գտնել:

Կարող էք երևակայել թէ հայերի հանդէպ ինչպիսի չար տրամադրութիւն կը տեղծվի թիւրք ամբոխի առանց այն էլ արդէն գիշատիչ բնազդներով լեցուն վաթսունհազարանոց զօրենների մէջ: Բէակցիօներական գրառոր անլեզել գրականութիւնն էր պակաս, այդ էլ եղաւ:

* * *

Հետզհետէ շրջակայքից հասնում են նահանգներ, բոլորն էլ լեցված զանազան ձևի հարստահարութիւններով, սպանութիւնների լուրերով: Օրինակ՝ Բասէնի Ալիջէյրէկ գիւղում ժանդարմները գալիս են հայերից զինւոր հաւաքելու, հայերը ուզում են խուսափել, ժանդարմները գործ են դնում «սովրական միջոցներ»՝ ծեծ, խոշտանգում և այլն: Գիւղացիք դիմում են գիւղից դուս փախուստի, քանի ժանդարմները սկսում են հասից կրակել. կան մի քանի վիրաւորներ գիւղացիներից:

Բասէնի Սիւլիկի գիւղում ժանդարմները Աւետիս անունով մի մարդու մահասիրտ ծեծում են, պահանջելով յայտնել պահված զինւորացուների տեղերը: Աւետիսը 3 շաբաթ է, որ հիւանդ է:

Բասէնի Դալը-Բարա գիւղում զինւորական իշխանութիւնը, տեսնելով որ ձիւնհալի պատճառով ձիերը չեն կարող ռազմամթերք փոխադրել, բռնագրաւում է հայերին, որ կառաբեն գրասեր դեր մինչև Թարխոյա գիւղը: Երեսհայեցէք 40—50 հայեր կառաբեի չորիների նման բռնադրուած 4 ժամվայ ճանապարհ են քայլում բոլորովին ճահճեների միջով:

Դերջանի Բաղաբինջ գիւղում հայերը մի քանի օր ապրել են կոտրածի սարսափի մեջ:

Ապրիլի 14-ին Բիթլիսի նահանգում Ալիքանցի քիւրդերը Սալաձոր գիւղում այրում են Պօղոսի որդի Յովակիմի չորացքը. Յովակիմը յանդգնում է բողոքել կառավարութեան: Քիւրդերը նրա այդ «սխալ» քայլը պատժում են մահով:

Դեռ կարելի է շարունակել այս «սովրական» լուրերի ցանկը, բայց այս շաբթին այսքանը բաւական է որպէս «նմոյշ»:

* * *

Կառավարութիւնը Բայազիդի սահմանից հայ զինւորներին հեռացնելուց յետոյ՝ այժմ ձեռնարկել է Բասէնի, Թորթումի սահմանագիծը մաքրապարզել: Կառավարութիւնը կասկածում է հայ զինւորների վրա, որպէս թէ նրանք կարող են աջակցել ինչ-որ հայ-ֆէդայական արշաւախմբերի կովկասից թիւրքիա խուժելուն ու զէնքերի և զինամթերի ներմուծման, ուստի այդ վտանգի դէմ ապահովվելու համար չարաբար է դատել սահմանապահ հայ զինւորներին չոկել ի-

ԳԱՂԱԹԱՀԱՆՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գաղթահանքի հայկական վարչապետության կողմից հրավիրվում է 30 ապրիլին (հին տոմ.) ժամը 2-ին կեսօրին Գաղթահանքի հայկական վարչապետության շենքում տեղի ունենալիք հերթական ընդհանուր ժողով։

Ժողովի օրակարգում կդրվի հետևյալ հարցը.

Գաղթահանքի հայկական վարչապետության 1911 թվականի հաշվետվության քննություն և հաստատություն։

Ժողովին կարող են մասնակցել միայն այն անդամները, որոնք ունեն առնվազն 10 բաժնեթուղթ։

Եթե նշանակված ժամին ժողովը չկայանա, ապա նույն օրակարգով նոր ժողով կհրավիրվի 8 օր հետո, որը կկայանա անկախ ներկա անդամների թվից։

Գաղթահանքի հայկական վարչապետության անդամ

ՀԱԿՈԲ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Քարտուղար՝ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գաղթահանքի հայկական վարչապետության կողմից հրավիրվում է 30 ապրիլին (հին տոմ. 13-ին

ԽՄԲԱԳՐԱՏԱՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԻՐՈՋ
Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՑԷ — ՄԱՐՏԻՆ ՊԱՐՈՆԻ ՓԱՐԻԶ, 10
ՀԵՌԱԽՕՍ 1-10-10

ՄԵՂՈՒ

ՀԱՆԴԵՍ ՀԱՅ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՑԷ — ՄԱՐՏԻՆ ՊԱՐՈՆԻ ՓԱՐԻԶ, 10
ՀԵՌԱԽՕՍ 1-10-10

ՄԵՂՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԻՐՈՋ
Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՍՑԷ — ՄԱՐՏԻՆ ՊԱՐՈՆԻ ՓԱՐԻԶ, 10
ՀԵՌԱԽՕՍ 1-10-10

դաւոր լիբիկ-բանաստեղծը ռուսահայերի մէջ, այլ և ժամանակակից հայկական բանաստեղծութեան նախահայրը։ Ժամանակակից հայկական բոլոր բանաստեղծները դասախրակված են Ցովհաննէսեանի բանաստեղծութեամբ, որ պահպանել է համլետեան վհատութեան հետ միասին՝ գաղափարի ամէն ամրողջութիւնը և ամբողջ սէրը դէպի եղբայրը, դէպի ժողովուրդը։ Նրա արտայայտութիւնները դաստիարակեցին սերընդի մէջ լաւագոյն զգացումներ։ Նրա բանաստեղծութիւնը մանաւանդ թանգ է մեր անբեղմնաւոր ժամանակին, երբ նրա մի քանի տաղանդաւոր հետեւողների շարքեր-ցան, հայկական գրականութեան մէջ, սկսել են տիրապետել ժամանակակից մօդերնիստական սիմվոլիստները, իբրեւց զգայականութեան կալուածները, հոգեկան զգրխների մանկուկ թեամբ և էգոիստական սրտերի զեկաղեն տութեամբ»։

* * *

«Հովիտ» շաբաթաթերթի մէջ (№ 16) Ս. Ց. առաջ է բերում մի իրողութիւն, որ ցոյց է տալիս, թէ բանագողութիւնը ընդհանուր երեոյթ է գարձել մեր գրողների մէջ։ Դուրս է գալիս, որ Ցովհ. Թումանեանի «Գառնիկ ախպէրը» գրուածքը, որ առաջարկված է իբրև ընթերցանութիւն կուրեիւն, «տեղ-տեղ ազատ փոխադրութիւն է և ուրիշ տեղ էլ տարական թարգմանութիւն ռուսական ժողովրդական մի հիքեքթից, որ կրում է «Сестрица Аленушка и братецъ Иванушка» վերնագրութիւնը»։ Շատ բաժանելի մէջ բերած են օրինակներ, այն է ռուսերէն բնագիրը և հայերէն փոխադրութիւնը-թարգմանութիւնը։

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 30 ապրիլի

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Ն. Ա. Աբէլեանին, որը ի յիշատակ իր վաղամեռ զաւակ՝ Անահիտի՝ նուիրել է յոգնած դպրոցիս աշակերտական սեռնտասան 25 րուբլի։

Պատասխանատու վերատեսուչ՝
Ց. Յունանեանց

—

Թիֆլիս, 30 ապրիլի

Թանդոյեան ս. Շուշանիկեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը ապրիլի 23-ին դպրոցի օգտին կազմած զբօսանքի հաւար յայտնում է իր խորին շնորհակալութիւնը այն բոլոր յարգելի անձանց, որոնք բարեացական և նիւթական աջակցութիւն ցոյց տուին և նպաստեցին զբօսանքի աջողութեան։

Թանդոյեան դպրոցի հոգաբարձութիւն

—

Թիֆլիս, 29 ապրիլի

Հրապարակի վրա է դրված Դարաբաղի թեմական դպրոցի 75-ամեայ գոյութեան յոբելեանը և այդ դպրոցը ապահովելու համար ֆոնդ կազմելու խնդիրը։ Ինչպէս յայտնի է, Վեհ. Կաթողիկոսը Թոյլատութիւն է տացել փոխարքայից հանգանակութիւն բանալ զարաբաղցիների մէջ և նպաստ այդ ֆոնդին։

Միանգամայն համակրելով այդ բարի ձեռնարկութեան, ես կը ցանկայի, որ այդ ֆոնդին կցվէին և այն գումարները, որոնք նուիրվել են զանազան ժամանակայդ դպրոցին անձեռնմխելի պահելու նպատակով։ Եւ որովհետև ինձ յայտնի է մի այդպիսի գումար, այն է 3000 ր. մի գումար, որ 1903 թ. նուիրել են դպրոցին արժեքդիրներով եղբարք Թիւնիբեգեանները և յիշատակ իրանց հանգուցեալ եղբօր՝ Բար-Յոբէզ Թիւնիբեգեանի, իբրև անձեռնմխելի գումար, որի տոկոսներով պէտք է հոգացվի աղքատ աշակերտների ուսման վարձը, ուստի այդ գումարը պէտք է կցվի ֆոնդին։ Այդ պատճառով ես խնդրում եմ Դարաբաղի թեմական դպրոցի հոգաբարձութիւնից բարեհաճել յայտնել լրագրութեան միջոցով, թէ ո՞րտեղ են այժմ պահվում այդ արժէքդիրները և ծառայում են նրանք իրանց բուն նպատակին։ Բ. Տէր-Յակոբեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— «Н. Вр.»-ի թղթակիցը հեռագրում է Պոլսից, որ կոմիտէտը եռանդով պատրաստութիւններ է տեսնում ժամ առ ժամ սպասվող յուզմունքները դիմաց։ Կառավարական և մասնաւոր գրասենեակներում պատրաստված են «ռումբերի ու զէնքի պաշարներ»։

— «Մ. և Ա.» կոմիտէտը դրակոնական միջոցների է դիմում իր հակառակորդներին ճնշելու համար։ Ուներով ամենահաստատ տեղեկութիւններ այն մասին, որ իր դէմ սկսված դատաղութեանը մեղսակից են բազմաթիւ բարձրաստիճան անձեր, նոյնիսկ պրինցներից, կոմիտէտը չը քաշվելով կալանաւորում է վերջիններիս։ Կալանաւորների թիւում է նաև ահագին ժողովրդականութիւն վայելող մօլլա Էմին-էֆէնդին, որ օրը ցերեկով պրոպագանդա էր մղում մզկիթներում «Մ. և Ա.» կոմիտէտի դէմ։

— Քննութիւնը պարզեց, որ Սկիւտարի հրդեհի հետ չերնօգորցիք բոլորովին կապ չունեն։ Հրդեհ գործողները կաշառված են եղել Աւստրիայից։

— Պետերբուրգի գերմանական դեսպանի ասելով Չերնօգորիան տէրրիտորիալ վարձատրութիւն չէ ստանալու։

— Ալբանիա ուղարկվեցին գաղտնի նպատակով 30 ալբան օֆիցէրներ։

— Ցունաստանը հրաժարվում է հաշտութիւնը ստորագրել մինչև Եգիպտոսի կղզիների և Ալբանիայի հարաւային սահմանի որոշման հարցի լուծումը։

— Բումին-բօլգարական վէճի վերհամժողովի վճիռները ստորագրվեցին Սազօնովից։ Սիլիստրիան իր բերդերով անցնում է Բումինիային։

— Բ. Դուռը ռուսական ազդեցութիւնը չէզոքացնելու համար, գերմաներէն հետիներին իրաւունք է տալիս գարձեալ կառուցանել երկաթուղի Սբվաղից-Կօնիա։

— «B. Вр.»-ն հաղորդում է, որ անգլիական Գէորգ թագաւորը շուտով այցելելու է Պետերբուրգ։

— «Մ. և Ա.» կոմիտէտը վճռել է հաշտութիւն կնքելուց յետոյ զբաղվել լուսաւորական գործունէութեամբ։

— Լօնդօնից հաղորդում են, որ անգլիական թագաւորին Բերլին չի ուղեկցի սըր-Էդուարդ Գրէյը, որովհետև այդ դէպքը քաղաքական նշանակութիւն չունի։

— Անգլիական ներքին գործերի մինիստրութեան մէջ գանվեց սուիքսժիսատուիների գրած ռումբը, նաև եբևան հանվեց դատաղութիւն, որի նպատակը եղել է սպանել լօրդերի պալատի բոլոր անդամներին։

— Ռուս աջակողմեանները հաստատում են, որ իբր թէ մինիստրներ-ը խորհրդի նախագահը խոստացել է նրանց, թէ երբ Պետական Դուման մերժէ ֆինլանդական օրինագիծը, Պետական Դուման կարճակվի, իսկ օրինագիծը կը գործադրվի հիմնական օրէնքների 87-րդ յօդուածի կարգով։

— Հոկտեմբերեանները իրանց համագումարը կայացնելու են աշնանը։

— Ներքին գործերի մինիստր Մակլակովը փոխեց մամուլի օրէնքի նախագիծը։ Լրագիրների խմբագիրները պարտաւոր են լրագիրների համարները ներկայացնել տպագրութիւնից մի ժամ առաջ։ Հաստանկարները պէտք է ներկայացվեն մի օր առաջ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

30 ապրիլի

ՎԵՆՏԿԱ։ Զինուորա-հոգևորական դասը պաշտօնական պաշտօնեայ կօվալևսկին պատուհասեց 20 ամսով բանտարկութեան և 32,915 ր. տուգանքի ռուս-կաթոլիկ պատերազմի ժամանակ դրամաշորթութեամբ զբաղվելուն համար։ Դատավճիռը կը ներկայացվի Բարձրագոյն քննչական մարմնի հաստատութեան համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետ. Դումայի մանաժողովը ֆրակցիայի ներկայացուցիչների մասնակցութեամբ որոշեց պետական եկամտաը քննել ընդհանուր ժողովում մայիսի 10-ից։

Չինուորական մինիստրութեան անունով արված հրամանի մէջ ասված է, թէ բարեբազդաբար հրամայված է այսուհետև ընդմիշտ վերացնել զինուորական վարչութեան պաշտօնեաների սուզ պահելը և այդպիսին պահել միմիայն Նորին Մեծութեան շքախմբի անձերի համար։

1913 թ. պետական եկևմտով սովորական ու արտակարգ ծախքերը կազմում են 3.218.335.371 ր., ընդհանուր եկամուտները—3.233.298.006 ր.։ Այդպիսով եկամուտները աւելի են 15.061.635 րուբլով, որով բարելաւվելու է արքունի երկաթուղային գործը։

ՑԻՑԻԿԱՐ։ Գաւառական խորհրդի նախաձեռնութեամբ հրատարակվելու է մի լրագիր մանկաբարական և մօնգօլական լեզուներով՝ մանկաբարների և մօնգօլների մէջ նոր կազմի պրօպագանդա անելու, նաև ռուսական ազդեցութեան դէմ կռիւ մղելու նպատակով։

ՄՈՒԿԴԷՆ։ Շատապով թնդանօթաձիգ վաշտեր ուղարկվեցին Պկինի։

ԲԵՐԼԻՆ։ Շվեյցարացի օդապնաց Բիլդերը, բարձրանալով 4 ժամ 35 րոպէ առաւօտեան, թռաւ Բերլին Ալպերը 3200 մետր բարձրութեամբ և իջաւ ժամը 6 ու 19 ր. Բալխաուզ։ Ճամբորդութեան մասերը։ Այս թռիչքը համարվում է մեծագոյն համաշխարհային մրցութիւն։

ՊԱՐԻԶ։ Գայֆօնգում սպանվել է Ֆրանսիական բարեկամ մանգարին Նգուչէնգուչանը։ Զինական մի շոգենաւի վրա գանվել են չորս արկղ պայթուցիկ նիւթեր, հասցեագրված հնդկա-չինական տեղացիներին։

ՎԻԵՆՆԱ։ «Պօլն. Նաբր.» հաղորդում է, որ ֆինանսների նախկին մինիստր Կօքովսկին նշանակվում է Գալիցիայի փոխարքայ նշանակված Բօրժինսկիի փոխարէն։

ՉԻՑՈՒ։ Շրջակայքում թափառում են խուճապահարների ասղակամբեր։ Տէնչժօուից գուից եկան 2000 զինուոր, Շանխայից—երեք յածանաւ։ Զօրանոցներում անկարգութիւններ են։ Տրամադրութիւնը անհանգիստ է։

ԿՕՊՆՀԱԳԷՆ։ Բացվեց ծովային իրաւունքի միջազգային 11-րդ կօնգրէսը 150 ներկայացուցիչների մասնակցութեամբ։

ՄԻՒՆԻՏԷՆ։ Հատ երեոյթին հոգեկան հիւանդ մինը տարհանակով սպանեց ոստիկանական գլուխապետին, նաև օգնութեան հասած ռուսաց զինուորական գործակալ Լէվինսկիին։

ՄՕՍԿՎԱ։ Հախալարանը պատուաւոր անդամ ընտրեց Ֆրանսիայի գիանական ժիւրարին։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թ-ի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։

(ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Սրագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Ադստաֆա 12 ժ. 34 ր., Դանձակ 3 ժ., Ելախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կարալ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Գօսպասար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Ադստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Դանձակ 4 ժ. 16 ր. առ., Ելախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կարալ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. կեր.։ **Փարդասար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Ադստաֆա 8 ժ. 50 ր. եր., Դանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Ելախ 1 ժ. 1 ր. առ., Հաջի-Կարալ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ.։ **Խան.ճ գնացքը** № 106 (Մարդատարի տրազութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Ադստաֆա 8 ժ. 41 ր. առ., Դանձակ 1 ժ. 7 ր. կեր., Ելախ 5 ժ. 19 ր. կեր., Հաջի-Կարալ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱՔՈՒՄ.— **Գօսպասար գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. կեր., Բաքում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Փարդասար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. կերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաքում 5 ժ. 40 ր. առ.։ **Փարդասար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաքում 10 ժ. 59 ր. առ.։ **Խան.ճ գնացքը** № 107 (Մարդատարի տրազութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաքում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.— **Գօսպասար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. կեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց երևան մանելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. կեր.։ **Փարդ.-ապրանքեաար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. կեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. կեր., Երևան 1 ժ. 33 ր. կեր.։ **Փարդասար-ապրանքեաար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. կեր., Կարս 4 ժ. 18 ր. կեր.։

ԲՕՐԺՕՄ.— **Փարդասար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Բօրժօմ 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. կեր.։ **Փարդասար** № 19/20—3 ժ. 18 ր. կեր., հասնում է Բօրժօմ 5 ժ. 59 ր. կեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒՒՑ.—**Սրագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր.։ **Գօսպասար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Փարդասար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. կեր.։ **Խան.ճ գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱՔՈՒՄԻՑ.—**Գօսպասար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Փարդասար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. կեր.։ **Փարդասար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խան.ճ գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.— **Գօսպասար գնացքը** № 4Ձ/3—7 ժ. 32 ր. եր.։ **Փարդ.-ապրանքեաար գնացքը** № 26/25—II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Փարդ.-ապրանքեաար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—**Փարդասար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Փարդասար գնացքը** № 19/20—7 ժ. 3 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԸՆԴՈՒՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն վէներական (սիֆիլիս) հ.։

Բ. Գ. ԱԶԱՐԵՒՑ—1—2 ժ. ներքին և երեխայ. հիւ.։

Գ. Մ. ՀԱԿՕԶԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՑԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն և կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱԻԵՏԻՍՑԱՆ—11—12 ժ. մորթու, վէներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։

Ա. Գ. ԿԱՐՊՈՎՑԱՆ—12—1 ժ. ներքին և երեխա-ց հիւ. և ծաղկեաստ.։

ԿԻՆ-ԲԱԺԻՆԻ ՅՁԻ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՔՊՈՆԵՐԸ՝

Մ. Գ. ԱԻԵՏԻՍՑԱՆ—6—7 ժ.։

ԿԻՆ ԲԺԻՆԻ Օ. Վ. ԳԱԻՎՍԿՑԱՒ-ԼՅՕՆԳԼ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։

Վճարը 50 կ.։ Հրատերները գրին համարվորէն (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—46

Զարհահասների համար

ԼՕՑԱ ԵՆ ՏԱՍԵԼ

Բժշկ. ֆէլդշէր **Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ**

1) **«Պաղցնի հիւանդութիւնների բժշկարան»** (կանանց և տղամարդկանց վէներական և այլ ցաւեր), բազմաթիւ բէկլամներով, խորհուրդներով և նկարներով։ Ընդհրամեալ բժշկարան է, ուրեմն մի գաղտնա մարզու համար, նամանաւանդ այնպէս, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ։ Լիքուն շատ պարզ ու տեղին հասկանալի։ Գինն է **50** կ.։

2) **«Տէրկէր** (ռուսուհուկ) **եւ նրա բժշկութիւնը»** բէկլամներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով։ Գինն է **20** կ.։

3) **«Կենիկամասի տպարը կամ մօդնի իրկէն»**, խիստ ծիծաղաշարժ մօդերվի մինիայն տղամարդկանցի համար։ Գինը **20** կ.։

4) **«Մօնայի ճեամերէրը»** յայտնի մօդերվից, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն։ Գինը 15 կ.

5) **«Փիւնայի դագաղում»**, պատմուածք հայ-թուրքական կռիւներից. գիակների նկարներով։ Գինը 7 կ.։

6) **«Ռեամկան զօրք եւ միլիցիա»** Պիէէօվից թարգմանած։ Գինը 5 կ.։

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին։ Պատուիրողները պէտք է առաջուց գինն գրքերի գինը մանկաներով ամանապրած ուրէ՝ բոլոր գրքերը միասին—17 կօպ. (Նպատակ՝ գոհացնել)։ Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаяну.

(Տ. կ.) 44. 100—30

Մատակարար

Ն. կ. մ. ՄԵԾ ԻՇԽԱՆ

ՆԻԿՕԼԱՅ ՄԻԽԱՅԼՕՎԻՉԻ

դրան:

ԿԱՆԳ ԱՌԼԻՔ
ՄԻ ԱԿՆԹԱՐԹ

ԲԱՑ ԵՆ ԹՈՂՆՎԱԾ

նոր պապիրօսներ

ՊԻԿ-ՊԻԿ 10 հատը 3 կօպ.
20 հատը 6 կօպ.

Այդ պապիրօսները բաց կը թողնվին ամեն օր սահմանափակ թիւով, միշտ թարմ, յատկապէս ծխախոտ ճանաչողների համար։

Ա/Տ. „Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ՈՐԴԻՔ“ ՇԱԽՎՈՒՄ Է ԱՄԵՆՈՒՐԵՑ։

342. 5—2

(2,5,7,12)

Աշխարհի ամենաւտուրք ժամացոյցը „ՒՕՆԷՐ“

Իսկական ժրնեվեան եւ 19 առարկայ—միայն 4 րուբ. 85 կօպեկով։





Մեցած բոլոր ժամացոյցները ամուր չեն նրա համար, որ, ինչպես էլ նրանց պահելու լինես մաքրութեան մէջ, այնու ամենայնիւ հասկի փոշիները բացուածքներով փչին մտնելու է ներսը և կանգնեցնելու մեխանիզմի ընթացքը։ Մենք սասցել ենք ներկայացուցչութեան իրաւունքը նորակատարելագործ. «Ռօնէր» գրպանի ժամաց. համար, որ Ցվեյցարիայում պատենտացրել է և ունի 51308 №-ը (մինչև այժմ չեղած)։ Այդ ժամաց. այն առաւելութիւնն ունի, որ մեխանիզմը ընդմիշտ ամուր փակված է և չունի բացվող ու ծածկվող փական. ընթացքը նիւաեալի է ցիֆերբլատի կողմից, այնպէս որ մեխանիզմի մէջ փոշի մտնելու ոչ մի հնարաւորութիւն չը կայ։ Դրա համար և «Ռօնէր» ժամաց. աչքի է ընկնում առանձն. իր ամուր մեխանիզմով և ուղիղ ընթացքով։ «Ռօնէր» ժամաց. կապոյտ պողպատից է (և ոչ սև), շատ ոտիկ, ոչ հասս արծաթէ բուլոնագից, ապակեղէն կամ արծաթազօծ ֆանտազի ցիֆերբլատով, միանգամայն չքեղ գործարաններով, դրսից երևացող անկարգ մայաանիկով, ընթացքը 15 քարերով, լարումը 40 ժամը մի անգամ «Ռէմօնտուար»։ Այդ ժամաց. ուղիղ կերպարն ունի միայն, բաղկացած հետևեալ առարկաներից. 1) Թաղօն. հնարագիտակ սկօբամասի 4 ենք գանդիտուլի հետ միասին